

բիարքի, որով մերժեցաւ լուծումն պատկի  
Յովիկ Գարաղէօզեանի ընդ կին իւր, զի չէք  
ինչ առիթ անհրաժեշտ լուծման. թ. 327:

— Յանուն Սիօն վարդապետի, վասն  
գնալոյ նորա առ ի քարոզել յընթացս մեծի  
պահոց ի կողմանս Սուրմալուայ և Սարգա-  
րապատի. թ. 335:

— Օրհնութեան և գոհունակութեան  
յանուն պարոնայց եղբարց Յարաթեանց  
Գանձակեցոց, վասն հիւրասիրելոյ նոցա  
զՆորին Վեհափառութիւն ի տան իւրեանց և  
նուիրելոյ ի արամաղբութիւն Նորին Սըր-  
բութեան երկու հազար բուբլի. թ. 349:

— Օրհնութեան և գոհունակութեան  
յանուն պ. Յովսէփայ Կարապետեան Թումա-  
շեանց Բազուեցոց, վասն նուիրելոյ նորա մի  
հազար բուբլի ի արամաղբութիւն Նորին  
Սրբութեան. թ. 351:

— Օրհնութեան և քաջալերութեան  
յանուն հոգաբարձուայ ժառանգաւորայ որ-  
բանոցին Վարազայ Վանուց, որ ի Վան.  
թ. 379:



ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԳԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՅ

9 փետր. Երևանի կոնսիստորիայի 1897  
թ. 4572 գրութեամբ Սինօղին ներկա-  
յոցրած թ. 175/90 գործից երևում է, որ  
Գէօղալ Դրիգորեանցին խաբէութեամբ պատ-  
կել են 60 տարեկան Նազար Սարգսեանի հետ:  
Սինօղը վճռեց պատուիրել Երևանայ կոն-  
սիստորիային՝ յանցաւորներին Երևանի նա-  
հանգական դատարանի պ. պրօկուրորի մի-

ջոցով, ըստ գորութեան 297 յօդ. քրեա-  
կան դատաստանի ենթարկել:

25 փետր. Սինօղը վճռեց հրամայել  
Տփլիսի կոնսիստորիային դատի ենթարկել  
Ներսէս քհ. Ղամազեանին, ըստ գորութեան  
պատժ. օր. 282 և 940 յօդ.:

4 մարտի. Սինօղը վճռեց հրամայել  
Աստրախանի կոնսիստորիային մահմեդական  
Սաբերջան Ռենիզու Չուրմանտիսին մկրտու-  
թեամբ ընդունել Հոյոց եկեղեցու ծոցը:

6 մարտի. Սինօղը լսելով Աստրախանի  
կոնսիստորիայի թ. 84 յայտարարութիւնը,  
որով նոյն թեմի առաջնորդը խնդրում է Սի-  
նօղի թողաուութիւնը Աստրախանում մտմի  
գործարան բանալու համար, վճռեց մերժել  
առաջնորդի խնդիրը:

6 մարտի. Ըստ բարեհաճ կամայ Վե-  
հափառ Հայրապետի Սինօղը յայտնեց Երե-  
ւանի նահանգական դատարանի նախագահին,  
որ Մայր Աթոռի հոգևոր ժեմարանը հա-  
մաձայն չէ թոյլ տալ Վիէնայում վախ-  
ճանուած առեսահպատակ Կոստանդին Վարշա-  
մեանի յանուն ժեմարանի կտակած դումարից  
ուրիշներին մաս հանելու, այլ ցանկանում է  
հանգուցեալի կտակը ի կատար ածուած տես-  
նել իսկութեամբ:

13 մարտի. Սինօղը 1890 թ. 2110  
և 2145 գրութիւններով դիմել էր Ներքին  
գործոց նախարարութեանը և միջնորդել վար-  
ձատրելու Հին Ղրիմի Ս. Աստուածածին ե-  
կեղեցու երեցփոխան Կարապետ Յովհաննի-  
սեան Բէզլարեանցին և Նոր Նախիջևանի Ս.  
Թէօդորոս եկեղեցու երեցփոխան Մկրտիչ  
Բրիտատփորեան Սաղբրեանցին՝ նոցա իննամեայ  
հաւատարիմ և շահաւէտ ծառայութեան  
համար: Արդ. Օտար գաւանդութեանց հոգե-  
ւոր գործոց գեղարամենար իւր թ. 715  
գրութեամբ յայտնում է Սինօղին, որ թա-  
գաւոր Կոյսըր ամենապարմաճարար շնորհել  
է Մկրտիչ Սաղբրեանին մի ոսկէ մէդալ ա-



Աննայի ժապաւինով պարանոցին կրելու, և մի արծաթեայ մէկայ կարապետ Բէզլարեանին կրճքի վերայ կրելու համար: Մինօգը վճուեց մէկալները ուզարկել Բեսարաբիոյ կոնսիստորիան՝ ըստ պատկանելոյն յանձնելու համար:

13 մարտի. Մինօգը վճուեց հրամայել Բեսարաբիոյ և Սոր Մախիջևանի կոնսիստորիային հրէուհի Աննա Մարկովնա Ազլիցկուն մկրտութեամբ ընդունել Հայոց եկեղեցու ծոցը:



ՅԱՆԵԼՈՒՄԸ ԵՐԱՐԱՏԻ 1898 Թ. ՄԱՐՏ և ԱՊՐԻԼ.

ՍՈՒՐԵՏ ՊԱՏՄԱՅԻՐ

Ե Ի

Մ Ո Վ Ս Է Ս Խ Ո Ր Ե Ն Ա Յ Ի .

Այս երկու պատմագիրներն փիճակը զարմանալի կերպով կապուեցին միմեանց հետ. երկուսն առընչութեան խնդիրը՝ զանազան տեսակ կարծիքների և քննութեանց ենթարկուելով, այժմ երևում է թէ վախճանական լուծման է համուծւ. Գեւ միայն մի քանի ամիս է անցել Սոկրատի պատմութեան հրատարակութիւնից, որի յառաջաբանի մէջ այնպիսի արդիւնքների էի հասել, որ համոզուած էի թէ՛ վերջնական է լինելու, և ահա շնկատուած ուշադրութիւնից վրիպած մի փոքրիկ, աննշան հատուած այսօր յեղաշրջել է իմ համոզմունքը և ես ստիպուած եմ թողնել բաժանուել իմ երկարժամանակեայ հաստատուն կարծիքից և միանալ նոցա հետ, որոնք վաղուց փոխել են իրենց հայեացքը մեր Պատմահօր մասին: Այսօր ինձ համար էլ իրողութիւն է, որ Մովսէս Խորենացու անունով մեր ձեռքը հասած Հայոց Պատմութիւնը այլ ևս չէ կարող Եւրոպայէն գործ համարուել: Ես Սոկրատի հրատարակութեան յառաջաբանի մէջ ընդարձակ տեղ էի տուել Սոկրատի, Սեղրեստրոսի և Խորենացու պատմութիւնների փոխառութիւններին. իմ նպատակից դուրս է եղել քննել Խորենացու խնդիրը ամբողջութեամբ, այլ ևս փորձել եմ որոշել մի-

միայն յիշեալ գործերի մասին յայտնած կարծիքները: Իմ ստացած արդիւնքի էական կէտերը սօքա են.

ա. Խորենացին անկասկէ Մեծ և Փոքր կոչուած Սոկրատներից, ինչպէս նաև Սեղրեստրոսի վարքից նա զոցանից ոչ մէկից չէ օգտուել՝ ոչ յունարէն բնագրից և ոչ էլ հայերէն թարգմանութիւնից:

բ. Յիշատակարանների տուած հաստատուն վկայութիւններով գտել եմ Մեծ Սոկ. և Սեղրեստրոսի վարքի հայերէն թարգմանութեան տարիները և հաւանական հիմունքներով որոշել Փոքր Սոկ. կըրճատման ժամանակը:

գ. Պրոֆ. Կարիէրի և ուրիշների հետ ընդունելով որ կապ կայ Խորենացու և Փ. Սոկրատի մէջ, պնդել եմ նոցա դէմ որ Խորենացին է վերջինին ազդու ծառայում որը համառօտուել է Եւրոպայէն գործում հետևապէս Խորենացին այդ ժամանակ արդէն կար և տարածուած էր, ուրեմն նրան չէ կարելի Ը կամ Ք դարը բերել:

Գրքիս հրատարակութիւնից շատ չանցած քննական յօդուածներ լրջս տեսան. Պ. Սո. Մալխասեանը գրեց «Մշակի 1897 № 113-ի մէջ» նա ընդունում է իմ եզրակացութիւնները: Պրոֆ. Գր. Խալատեանը ավետարանող քննութիւն տուեց «Հանդէս Ամսօրեայի 1897 թ. Հոկտ. նոյ. և Դեկտ. ամսահամարներում»: սրա մասին իմ ասելիքը ստորև է, Գեր. Սահակ եպիսկոպոսը տուել է Սոկրատի տպագրի Ա. գրքի և Երուսաղէմի ձեռագրի տարբեր ընթերցումները՝ իւր գիտողութիւններով «Արարատ»ի մէջ. զրա մասին ևս արդէն գրել եմ նոյն «Արարատ»ում 1897, Սեպտ. Հոկտ. (էջ 406-411-ի):